Ո՞ՒՐ ՏԵՂՈՐՈՇԵԼ ԱՆԻԻ ՎԻՄԱԳՐԻ «ԱԽԷԼՔԱՂԱՔ»-Ը

Պարոյր Սուրադեան

Անիի քարայրերի ուսումնասիրութեանը նուիրուած մենագրութեան հեղինակ Դաւիթ Ղիփչիձէն իր համարակալած ժայռափոր կառոյցների թիւը հասցնում է 500-ի՝ դրանցից «շուրջ 30-ը» անուանելով եկեղեցի[1]: Գրքի նիւթերը մշակող ու ծանօթագրող ճարտարապետութեան պատմաբան Նիկոլայ Տոկարսկին կառոյցների ընդհանուր թիւը փաստօրէն կրկնապատկում է, իսկ քարայրերի մէջ եկեղեցիներինը՝ 30-ի փոխարէն հաշուում 35[2]: Անդրադառնալով պաշտամունքային տեղի ծառայող քարայրերի տեղաբաշխմանը՝ Դ. Ղիփչիձէն անհրաժեշտ է նկատել արձանագրել, թէ «Ուշագրաւ է, որ ոչ մի քիչ թէ շատ մեկուսի [բնակելի] հատուած, յատկապէս քաղաքից հեռու [գտնուող], առանց եկեղեցու չի մնում. այս կարգից դուրս մնացող երկու բացառութիւն կայ՝ Ծաղկոցաձորի K հատուածը եւ Ախուրեանի ձորը, ուր չկայ ոչ մի եկեղեցի, ինչը երկու դէպքում էլ, յատկապէս երկրորդում, բացատրւում է, ակներեւ է, աւերուածութեան բարձր աստիճանով, եկեղեցիները կարող էին անհետ կործանուել, ինչպէս եւ միւս քարայրերը: Քանի որ իւրաքանչիւր շրջանի հասնում է գոնէ մէկ եկեղեցի, իսկ երբեմն էլ՝ 2-3, ճշմարտանման է ենթադրել, թէ նրանք ծխական եկեղեցիներ են»[3]:

Ն. Տոկարսկու կազմած «Անիի քարայրերի քանակի համադրական աղիւսակից» կարելի է տեղեկանալ, թէ յիշեալ եկեղեցիներից քանիսը ո՛ր ձորում են գտնւում եւ ըստ այնմ ծանօթանալ Դ. Ղիփչիձէի հանգամանալի նկարագրութեանը: Քաղաքին հիւսիս-արեւմուտքից յարող Իգաձորում (resp. Այգեձորում), որ հիւսիս-արեւելքից ձգւում է դէպի հարաւ-արեւմուտք եւ Պարոնի պալատի մօտ միախառնւում Ծաղկոցաձորի հետ, ճանաչուել ու նկարագրուել է երկու եկեղեցի (երկուսն էլ՝ կիրճի աջ լանջին)՝ A/1 եւ A/2 համարակալումով[4]: Նրանցից առաջինը, ըստ հետազօտողի, ծրագրուած է հիմքում խաչաձեւ, սակայն «բաւարար հանգամանալիութեամբ չի կատարուած»: Ընդ որում, կողային թեւերին եղած մեծաչափ երկու փորուածքները (2,00x 0,98մ, 1,95x0,72մ) Դ. Ղիփչիձէն դիտարկել է իբրեւ կնունքի աւազաններ[5], մինչդեռ այդպիսիք Ն. Տոկարսկին համարում է դամբարան, հետեւաբար, ըստ այդմ, Իգաձորի եկեղեցիներ կամ մկրտարաններ կոչուածները պիտի վերանուանել դամբարանական կառոյցներ. նրանցից A/1-ը ունի մէկ ճակտոն՝ դէպի արեւմուտք նայող, եւ այստեղ է միակ մուտքը, որի բարաւորների վերեւի կիսաշրջանը զարդարուած է երիզող ութաթերթ խաչերով: «Պատուհանից ձախ կայ մեծ [ու] հարթ խորշ՝ շրջանակով, որը նախատեսուած է, հաւանաբար, արձանագրութեան համար, սակայն մնացել է չօգտագործուած»[6]: Դ. Ղիփչիձէի այս եզրակացութիւնը իր իսկ ծանօթագրմամբ հաստատւում է առաջինից 20-25 քայլ դէպի հարաւ գտնուող A/2 եկեղեցու (իմա՛ մատուռի) արձանագրութեան տեղադրութեան օրինակով: Այստեղ մեզ զբաղեցնողը հէնց այդ վիմագիրն է, ուստի բերենք Դ. Ղիփչիձէի նկարագրութիւնն ամբողջութեամբ. «Պատուհանից աջ՝ գետնից 2,25մ բաձրութեան վրայ, կիսաշրջան կեղծ պսակը (շուրջ 0,49մ երկայնքով) պահող, կեղծ սիւնով շրջանակուած (ուղղահայեաց գլխիկներով) 0,62x1,21x0,02մ կամ 0,03մ. հարթ խորշում զետեղուած է խոր փորուածք ունեցող երկաթագիր տառերով (գրերի միջին մեծութիւնը՝ լայնք 0,03, բարձր. 0,05, խորք՝ 0,01մ) 14 տողանոց արձանագրութիւն: Վիմագիրը գրեթէ անընթեռնելի է. ճանաչելի են միայն առանձին տառեր ու վանկեր, որովհետեւ այն ծածկուած է խաւի եւ կարմրաւուն քարաքոսի հաստ շերտով»[7]:

Արձանագրութեան ընթերցման անդրանիկ փորձ հրապարակել է Կ. Բասմաճեանը. մինչեւ 5-րդ տողը ներառեալ շարադրանքը բանաձեւային է եւ բովանդակութիւնը՝ յստակ: 6-րդ տողում իմաստակիր են ՈՐԴԻ եւ ԿԵՆԱՑԿԻՑ բառերը, սակայն հասկանալի չէ նրանց յարաբերակցութիւնը: 7-րդ տողը սոսկ տառաշարք է՝ բացառութեամբ յաջորդ տողի սկզբի հետ բառային միաւոր կազմող ՍՏԱ/ՑԱՔ դիմաւոր բայի: 8-9-րդ տողերը լիարժէք են՝ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲ ԶԵԿԵՂԵՑԻՍ: Շարունակութեան 10-14-րդ տողերում անվերապահելի երկու բառ կայ՝ ՔԱՂԱՔ եւ թուականով պատուիրողի կամ գրչի անուն՝ ԶԻ ՍԱՐ(գիս)[8]:

Ինչպէս երեւում է, ընթերցումը կատարուած է՝ առանց ժայռի վրայ գոյացած քարաքոսը մաքրելու, ուստի արձանագրութեան շինարարական բովանդակութիւնը կռահելի է, իսկ մանրամասնութիւնները՝ ձեռնարկողների ինքնութիւնը, նպատակադրումը, տեղանքի անուանումը եւ կառուցման ստոյգ թուականը՝ ոչ:

Արձանագրութեան ընթերցման աւելի յաջողուած փորձ գտնում ենք Յ. Օրբելու կազմած եւ Ս. Բարխուդարեանի խմբագրած Անի քաղաքի վիմագրերի դիւանում[9]: Դատելով լուսանկարից (տախտ. XXV)՝ վերծանութիւնից առաջ բաւական յաջողութեամբ խորշը մաքրել են հետագայ գոյացութիւններից, եւ Կ. Բասմաճեանի հրատարակութեան մէջ անհասկանալի ոչ քիչ տառաշարքեր դարձել են իմաստակիր: Քարի ջարդուածքների եւ մասնակի հողմնայարուածութեան պատճառով անվերծանելի են մնացել վիմագիր 10-12-րդ տողերը: «Դիւանում» այն ներկայացուած է, բացի լուսանկարից, նաեւ գրչանկարով եւ ունի հետեւեալ ընթերցումը. «Կամաւն Ա(ստուծո)յ պարոնութեան աթապ/ակ ամիրսպաս/ալար Շահինշահի,/ ես Քորգի, կենակից /իմ Սթէէս կատա<ր/ե>ցաք մեր հալալ արդ /եան<ց> զէկեղեցիս... Ախէլքաղաք/> իս... թուին>ՉԽ: Սարգ<իս>»:

Այժմ վստահաբար կարելի է ասել, թէ արձանագրութիւնը շինարարական է եւ այն նպաստաւորել են Քորգին ու նրա կողակից Սթէն (resp. Սիթի-ն), իսկ կառուցումը տեղի է ունեցել ոչ թէ ՉԻ-1271 թ., ինչպէս Կ. Բասմաճեանի վերծանութեան մէջ է, այլ ՉԽ թուականին (=1291 թ.):

Արձանագրութիւնը շարադրական նախնականութեան հասցնելու համար կարելի է մի քանի մասնաւոր լրացումներ կատարել: Այսպէս, «պարոնութեան աթապակ ամիրսպասալար Շահինշահի» դրուագը, անշուշտ, պիտի սկսուէր «ի» նախդիրով, այսինքն՝ Շահինշահի պարոնութեան ժամանակ կամ Շահինշահի պարոնութեան (իշխանութեան) տարածքում: Այդ նոյն «ի» նախդիրը, իբրեւ բացառական հոլովի ցուցիչ, պիտի որ ներկայ լինէր «...մեր հալալ արդեանց» հատուածի սկզբում: «Սթէ» անձնանունը Ստենի/Սիթի տարբերակներով յայտնի է Անիի այլ արձանագրութիւններից եւս, ուստի նրա «Սթէէս» ընթերցումը սրբագրելի է «Սթէս»[10]: Կարելի է մօտաւոր վերականգնումներ առաջարկել եւ յաջորդող տողերում, ուր ենթադրելի է, որ յիշատակի ու բարեխօսութեան խօսքեր պիտի լինէին: Կարեւորը, սակայն, նախավերջին տողում յստակօրէն կարդացուող ԱԽԷԼՔԱՂԱՔ տեղանունն ու նոյնքան անվերապահ ՉԽ թուականն են:

«Դիւան» հրատարակութիւնը, հասկանալի է, մեկնաբանութիւններ չունի, եւ միայն տեղանունների ցանկից կարելի է վստահանալ, որ ԱԽԷԼՔԱՂԱՔ-ը տեղանուն է ընկալուած[11]: Վերեւում արդէն ա-

© National Library of Armenia

սացինք, որ Ն. Տոկարսկին Իգաձորի յիշեալ երկու կառույցները դամբարան է համարում՝ չմերժելով նրանց՝ խաչահիմք եկեղեցու ձեւ ու աւագ խորան ունենալը: Սակայն Ն. Տոկարսկու առաջադրած դրոյթներից առաւել ինքնատիպը Իգաձորի այս կառույցների երեւան գալու ժամանակագրութեանն է վերաբերում. նա համադրում է դրանք Աղցում պահպանուած Արշակունեաց ստորգետնեայ դամբարանին եւ որոշ ընդհանրութիւնների հիմամբ եզրակացնում, որ Իգաձորի մատուռ-դամբարանները եւս IV-V դարերի դամբարաններ են՝ թերեւս, նոր ժամանակներում (իմա՛ XIII-XIV դդ.) յարմարեցուած վերգետնեայ Անիի ճարտարապետական ու յարդարանքի ձեւերին[12]: Այս պարագայում արծարծուող արձանագրութեան հաղորդումները նրան չեն կաշկանդում, որովհետեւ նախնական հրապարակման մէջ նա այդ վիմագիրը Դ. Ղիփչիձէի հետեւողութեամբ համարում է անընթեռնելի[13], իսկ Յ. Օրբելու կազմած «Դիւանում» եղած հրապարակմանը Ստ. Մնացականեանի թարգմանութեամբ ծանօթանալուց յետոյ, Ս. Երեմեանից ստացած տեղեկութեան հիման վրայ, արձանագրութեան ԱԽԷԼ-ՔԱՂԱՔ-ը նոյնացնում է XI դարում Ջաւախքում գոյացած Ախալքալաքին եւ եկեղեցու կառուցումը վերագրում այս բնակավայրին[14]: Սակայն արձանագրութեան հետ կապուած պարագաները բնա՜ այդպիսի եզրակացութեան հիմք չեն տալիս:

1) Ամիրսպասալարի պարոնութեան փաստը կարող էր յիշուել այն դէպքում, եթէ կառուցումը կատարւում էր նրա օրօք կամ նրա տիրոյթում: Ոչ մի հիմք չունենք պնդելու, թէ Ջաւախքը XIII դարի վերջերին պատկանում էր Զաքարեան իշխանական ընտանիքի ժառանգներին: Քարայրի արձանագրութեան յիշատակած Շահինշահը Իւանէ Բ-ի որդին է, որ մահացել է 1320 թուականին[15]: Իգաձորի արձանագրութեան փորագրումից (1291 թ.) շատ առաջ Ջաւախքի Ախալքալաքը պատկանում էր էրիսթաւ Կախա Թորելու ընտանիքին[16]:

2) Ճիշտ եւ ճիշտ A/2 եկեղեցու մուտքի մօտ արձանագրութեան խորշին նման հարթեցուած խորշ կայ նաեւ A/1 մատուռի արեւմտեան պատին, Դ. Ղիփչիձէի համոզմամբ՝ դարձեալ վիմագրի համար նախատեսուած: Վերջինիս համաժամանակեայ լինելը հաստատւում է կեղծ սիւների, պսակի եւ յարդարանքի նոյնականութեամբ[17]: Ուրեմն վիմագրի տեղեկատուութիւնը վերաբերում է այն կառոյցին, որի վրայ փորագրուած է:

3) Վիմագրում բանաձեւային ճշգրտութեամբ ասուած է, որ Քորգին ու նրա կենակից Սթին «կատարեցաք [ի] մեր հալալ արդեանց Զեկեղեցիս...»: Եթէ խօսքը վերաբերէր այլուր գտնուող եկեղեցուն ցուցական դերանուան (ս/այս) վերականգնումն աւելորդ էր (սպասելի էր զեկեղեցին) եւ ապա՝ այդ բառին պիտի յաջորդէր տեղանքի անունը, մինչդեռ վիմագրում «եկեղեցի» եւ «Ախէլքաղաք» հասկացութիւնները իրարից բաժանուած են երեք տողով: Այդ տողերի բովանդակութիւնն անծանօթ է, սակայն վստահաբար Ջաւախքի Ախալքալաքին չի վերաբերում:

4) Հայկական միջնադարեան շինարարական արձանագրութիւնների պատկառելի քանակութիւնից տողերիս հեղինակին անծանօթ են դէպքեր, երբ եկեղեցու մուտքի մօտ, յատկապէս՝ վիմագրի համար հարթեցուած խորշում խօսուի բոլորովին այլ տարածքում կատարուած շինարարութեան մասին, երբ նոյնիսկ չգիտենք, թէ իրենց «հալալ արդեանց» յատկացնողները որեւէ առնչութիւն ունե՞ն ուրիշին պատկանող այդ հեռաւոր բնակավայրի հետ: Մինչեւ օրս հայագիտութեանը ծանօթ աղբիւրներից միայն Տիգրան Հոնենցի 1215 թ. ծաւալուն արձանագրութեան ՅԸՆԴՈՅ ընթերցումը կարող էր մտածել տալ, թէ անեցի մեծատունները կարող էին հողեր կամ տի-

րոյթներ ունենալ Ջաւախքում, եթէ յիշեալ տեղանուան ուղղականը վերականգնենք ՅՈՒՆԴԱՅ եւ այն նոյնացնենք Թմուկի դիմաց գտնուող Ծուղդայի հետ («Դիւան»-ի ցանկում ՅԸՆԴՈՅ է): Սակայն նման ենթադրութիւնը անտեղի է, քանի որ արձանագրութեան բուն տեքստում գրուած է ՈՒՆԸՆԴՈՅ (Ունընդոյ Բ դանդն)[18]:

Այսպիսով, մնում է եզրակացնել, թէ արձանագրութիւնը վերաբերում է այն կառոյցին, որի պատին փորագրուած է, ընդսմին՝ վիմափոր կառոյցը շինողներին ու նրանց ժամանակակիցներին ներկայացել է որպէս եկեղեցի, ինչպէս նրան կոչել են վիմագրում: Այս պարագային ինքնին հարց է առաջանում՝ ի՞նչ է նշանակում կամ ո՞ւր է գտնւում վիմագրում յիշատակուող ԱԽԷԼ-ՔԱՂԱՔ-ը: Կարծում ենք՝ այդ անունն է կրել Անին բնակեցուած քարայրերով շրջապատող ձորերի կամ գոնէ նրանցից մէկի՝ Իգաձորի թաղամասը: Ընդ որում, կիսով չափ վրացերէն (ախէլ<ախայլ<ախալ-ի, հմմտ. խէչ<խայչ<խաչ) այդ անունը (նոր+քաղաք) կարող էր գոյանալ XII դարից ոչ շուտ, երբ Անին տիրանալու համար բնակիչները նախընտրեցին վրաց Բագրատունիներին հրաւիրել, իսկ աւելի ստոյգ՝ այդ դարի վերջին՝ Զաքարեանների ձեռքով ազատագրելուց եւ իշխանական այդ տան տիրոյթ դառնալուց յետոյ: Անիի ուղեցոյցը կազմող Յ. Օրբելին քաղաքի կառուցուածքը ներկայացնելիս ասում է. «Անին նկարագրելիս, իհարկէ, անհրաժեշտ էր հետեւել քաղաքի պատմական բաժանումին՝ Միջնաբերդ, Հին քաղաք եւ Նոր քաղաք»[19]:

Ճիշտ այս «Նոր քաղաք» ներկայացնող թաղամասն է, որ վիրացական տիրութեան քաղաքական շրջանակ ընդգրկման շուրջ մէկ հարիւրամեակի ընթացքում, սկսել է մասամբ թարգմանաբար «Ախէլքաղաք» յորջորջուել: Բիւզանդական տիրապետութեան շրջանում Անին, յիրաւի, բաղկացած է եղել երեք հիմնական թաղամասերից, որոնց վարչութիւնն ստանձնել են Բագրատ Մագիստրոսի արձանագրութեան յիշատակած երեք անձինք[20]: Նոր քաղաքը ներկայացնելիս Յ. Օրբելին մասնաւորեցնում է, թէ «Նոր քաղաքի կազմի մէջ մտնում են նաեւ Ծաղկոցաձորի քարայրային բնակարանները», իսկ Իգաձորը յարում է նրան ու լուծւում նրա մէջ. «Ծաղկոցաձորից Իգաձոր ելնող ճանապարհով,- շարունակում է Յ. Օրբելին,- կարելի է քաղաք բարձրանալ՝ դէպի Իգաձորեան դարպասներ: Ըստ որում, ձախ ձեռքի կողմ կը մնան երկու քարանձաւային եկեղեցի, որոնցից մէկը արձանագրութիւն ունի. եկեղեցիների ներսում հետաքրքիր են պատերի մէջ փորուած կնքաւազանները՝ նախատեսուած հասուն մարդու համար»[21]:

Այստեղ էլ խօսքը Նոր քաղաքի (Ախէլքաղաք)՝ մեզ զբաղեցնող եկեղեցիների մասին է, որոնք, նոյն գիտնականի կարծիքով, «սպասարկել են, հաւանաբար, քարայրերում ապրող բնակչութեանը, թէեւ այդ եկեղեցիներից մի քանիսը առնչութիւն են ունեցել գերեզմանոցներին»[22]: Վերջին պարագան կապուած է, ինչպէս Ն. Տոկարսկին է հիմնաւորում, այնտեղ կատարուած թաղումների հետ, մանաւանդ որ՝ «հասուն տարիքի մարդու» կնքաւազան կոչուածը քարէ կափարիչով ծածկուելու համար պատից դուրս թողած յենարան է ունեցել: Այսպէս, ուրեմն, վիմագրում եկեղեցի կոչուածը միաժամանակ եւ դամբարան է ծառայել: Հայոց ազգային եկեղեցին բուն աղօթարանում թաղում կատարելու սովորութիւն չունի, ուստի մնում է ենթադրել, թէ պաշտամունքային կառոյցը գերեզմանատան մատուռ է: Իսկ որ Անիի քարայրային դամբարաններում մատուռներ կային, յայտնի է թէկուզ վստահաբար միաբնակ եկեղեցու հետեւորդ Տիգրան Հոնենցի դամբարանի օրինակով[23]:

© National Library of Armenia

Հայերէն չինարարական արձանագրութիւն ունեցող վիմափոր եկեղեցին (թերեւս, նաեւ՝ նրա կողքին գտնուող եւ արձանագրութեան համար հարթած խորշ ունեցող աղոթարանը), կառուցուած է 1291 թուականին, իսկ թէ մինչեւ այդ քարայր եղել է թէ ոչ, կամ եթէ եղել է՝ իբրեւ ինչ է ծառայել, մեր պարագայում անկարելի է ստոյգ որոշել: Ինչ վերաբերում է Ն. Տոկարսկու տեսութեանը, թէ նրանք գրեթէ ժամանակակից պիտի լինեն Աղցի դամբարանին, արձանագրութեան վերծանութեամբ չի հաստատւում: Մենք հիմնաւոր ապացոյցներ չենք գտնում վերանայելու Ն. Մառի եւ Յ. Օրբելու այն համոզմունքը, թէ «Այդ քարայրերը, անկասկած, արհեստական ծագում ունեն եւ բնակարան են ծառայել Անիի առաւել աղքատ դասակարգի բնակչութեան համար եւ իրենց ներկայ տեսքով ամենեւին չեն ներկայացնում նախնադարեան կացարանների մնացորդներ, ինչպէս այդ ենթադրւում էր, այդ քարայրերում ապրում են եւ այժմ»[24]:

Առաւել վիճարկելի է Արմէն Զարեանի այն դրոյթը, թէ Անին ի սկզբանէ ծրագրուել է իբրեւ ստորգետնեայ բաղկացուցիչ ունեցող քաղաք[25]:

Սակայն այս խնդիրը մասնագիտական այլ քննութիւն է պահանջում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Д. А. Кипшидзе.** *Пещеры Ани.* (Материалы XIV Анийской археологической кампаний 1915 года). Обработка материалов, чертежи, предисловие и комментарии Н. М. Токарского, Ереван, 1972, стр. 17.
2 Անդ, էջ 166, 171:
3 Անդ, էջ 19:
4 Անդ, էջ 121-126:
5 Անդ, էջ 122: Հմմտ. **И. А. Орбели.** *Краткий путеводитель по городище Ани*, СПБ, 1910.
6 Անդ, էջ 123:
7 **Д. А. Кипшидзе,** նշ. աշխ., էջ 124:
8 **K. J. Basmadjian,** *Le inscriptions arméniennes d'Ani.*-"Revue de l'Orient chrétien". 3e série, t. III (XXIII), 1922-1923, p. 340-341.
9 Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, Անի քաղաք, կազմեց Յ. Ա. Օրբելի, Երեւան, 1966, էջ 67-68 (N209), Ն. Տոկարսկին վիմագրի տեքստը ժամանակին փնտրել է Յ. Օրբելու կամ Դ. Ղիփշիձէի հաւաքած նիւթերի մէջ եւ չի գտել (տե՛ս **Н. М. Токарский,** *Из истории пещерного строительства в Ани.*- "Историко-филологический журнал", 1966, N 1, стр. 125-138): Դիւանի աղիւսակները տպագրուել են 1924 թ., եւ նրանցում յիշեալ վիմագիրը ներկայացուած է:
10 Սթէ/Սիթի անուան հոլովման առանձնայատկութեան մասին տե՛ս **Н. Марр.** *От редактора*, [Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1919, էջ XIII-XIV]. **Ս. Ա. Աւագեան,** *Ի յանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմութիւնը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրութիւններում*, «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 156-160:
11 Ցանկը կազմողը, բնականաբար, Յ. Օրբելին չէ:
12 Մանրամասնութիւնները տե՛ս **Н. М. Токарский,** նշ. աշխ., էջ 135-138:
13 Անդ, էջ 137:
14 **Д. А. Кипшидзе.** *Пещеры Ани*, стр. 179-180.
15 Տե՛ս **Պարոյր Մուրադեան,** *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, Երեւան, 1977, էջ 178, 182:
16 *Վրաց ժամանակագրութիւն* (1207-1318), թարգմանութիւնը հին վրացերէնից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները **Պարոյր Մուրադեանի,** Երեւան, 1971, էջ 111:
17 **Д. А. Кипшидзе,** նշ. աշխ., էջ 122-123:
18 Տե՛ս **П. М. Мурадян,** *Проблема конфессиональной ориентации церкви Оненца.*- "Кавказ и Византия", вып. 5, Ереван, 1987, стр. 42 и 43: ՈՒՆԸՆԴՈՑ-ի ուղղական հոլովաձեւը ՈՒՆՈՒՆԴ-ն է:
19 **И. А. Орбели.** *Избранные труды*, Ереван, 1963, стр. 105.
20 Այդ արձանագրութեան կապակցութեամբ հանգամանալի քննութիւն տե՛ս **В. В. Бенешевич,** *Три анийские надписи XI века из эпохи византийского владычества*, Петербург, 1921, стр. 21-28, նաեւ՝ **Ս. Ա. Աւագեան,** *Վիմագրական պրպտումներ*, Երեւան, 1986, էջ 26-45, հմմտ. **Պ. Մուրադեան,** *Բնագրագիտական դիտարկումներ*,- ՊԲՀ, 1994, թիւ 1-2, էջ 176-182:
21 **И. А. Орбели,** նշ. աշխ., էջ 114:
22 Անդ, էջ 123:
23 Անդ:
24 Տե՛ս **П. М. Мурадян,** *Проблема..., стр. 45.*
25 Անդ, էջ 123:

ՆՈՒԻՐԱՏՈՒԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ

Լեւոն Սարգսեան

Ա. Նուիրատուական յօդուածներ

Միջնադարեան Հայաստանի գրաւոր աղբիւրներում, յատկապէս եկեղեցական ժողովների որոշումներում, կան բազմաթիւ յօդուածներ, որոնք աղերսւում են նուիրատուութեան հարցերին: Վաղ միջնադարում դրանց յատուկ անդրադարձել է դեռեւս կաթողիկոս Սահակ Պարթեւը (387-439):

Հայոց եկեղեցին իր հիերարխիկ աստիճանակարգով ունէր առաւել կենտրոնաձիգ եւ համապարփակ իշխանութիւն: Բարձրագոյն գահաւորակին բազմած հայրապետին ենթակայ էին բոլոր հոգեւոր իշխանաւորները, որոնք ամենատարբեր պատրուակներով երբեմն ունենում էին սուր վէճեր եւ բախումներ: Կենտրոնախոյս նկրտումներ ունեցող բարձրաստիճան բոլոր հոգեւորականներին վեհափառն իրաւունք ունէր նզովելուց բացի պատժի ենթարկել, կարգալոյծ անել, ինչպէս նաեւ աքսորել: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում անհնազանդութեան երեւոյթներ հանդէս եկան յատկապէս Սիւնիքում, Արցախում եւ այլուր: Բարձրաստիճան հոգեւորականութեան (Յակոբ Ապստամբ, Խոսրով Անձեւացի եւ այլք) ընդվզումները կաթողիկոսարանի դէմ առաւել յաճախ տեղի էին ունենում գաղափարաբանական, ինչպէս նաեւ տնտեսական հողի վրայ: Այդ իսկ պատճառով եկեղեցու աւանդապահ հայրերը հռչակեցին օրէնքներ եւ կանոններ, որոնք քաղաքացիութեան լայն ճանաչում ստացան դեռեւս վաղ աւատատիրութեան դարաշրջանում: Սահակ Պարթեւի օրօք եկեղեցական թեմերի մէջ առաջացան անհամաձայնութիւններ եկեղեցիների ու վանքերի կարգավիճակի եւ տասանորդ հարկի առնչութեամբ: Սահակն այդ հարցերը լուծելու համար գրում է օրէնքի աստիճանի բարձրացուած կանոններ, որոնցից է մեզ հետաքրքրող, ստորեւ բերուող ՇԾԵ (ՇԾԱ, ԼԶ) կանոնում կարդում ենք.

«Քանզի բազումք կարծեցին տգիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել եւ այլ զոմն վանս, եւ տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս եւ հերձուածս ի մի միաբանութիւն հաւատոց եւ մոռացան զպատուիրանին բանն որ ասէ. «Մի է Տէր, մի՛ հաւատք եւ մի՛ մկրտութիւն...»[1]: Սահակի կանոններով սահմանւում են (յօդուած ԽԳ), թէ նուիրատուութեան որ մասն ում է հասնում[2]:

Հենուելով աստուածաշնչային դրոյթների վրայ, նկատի ունենալով հայ եկեղեցու շահերը, Սահակ Պարթեւը աշխարհիկ մեծահարուստ հաւատացեալներին խորհուրդ է տալիս մասնաբաժին տալ եկեղեցու հայրերին՝ վկայակոչելով Ելից գրքի 23-րդ հատուածը, ուր ասւում է. «Դատարկաձեռն ամենեւին մի երեւեսցիս առաջի իմ»[3]: «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան»[4]:

Ընդսմին կաթողիկոսը զգուշացնում էր, որ տասանորդը պէտք է տարբերել ընծայաբերումից[5]: Այս կապակցութեամբ նա բարձր էր գնահատում գաւառական եպիսկոպոսների՝ քորեպիսկոպոսների դերը, ուստի գտնում էր, որ նուիրատուութիւնները չի կարելի բաժանել կամ օտարել առանց գաւառի եպիսկոպոսի գիտութեան,– կարդում ենք Շահապիւանի ժողովի կանոնական որոշումներում[6]: Նուիրատուական ե-

© National Library of Armenia